

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐՈՒԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE

DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE

ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH

SUNDAY BULLETIN OF

ST. GREGORY THE ILLUMINATOR

ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 28 Յոկտեմբեր 2018

Է. Կիրակի Չկնի Սրբոյ Խաչին / ԹԻԻ 82

Dimanche 28 octobre 2018

7ème Dimanche après la Sainte Croix / NO. 82

Today's Bible Readings:

1 Corinthians 1:18-24 / Matthew 24:27-36 /

Les lectures de la Bible d'aujourd'hui:

1 Corinthiens 1: 18-24 | Matthieu 24: 27-36 |



Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Յոգեւոր Յովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Office Matines à 9 :30 - Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

La Sainte Messe à 10:30 - Ս. Պատարագ Ժամը 10:30-ին

Office de Requiem à Midi - Յոգեաւստեան Պաշտօն կէսօրին

Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan, Dn. Raffi Arabian,

Dn. Norayr Grigoryan, Dn. Kami Sarimanukoglu, Dn. Zaven Der Sahagian

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjan

Choirmaster: Mr. Sarkis Barsemian


Organist: Mr. Karen Manucharyan

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca


ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

1 ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ 1.18-24



18Արդարեւ խաչին քարոզութիւնը յիմարութիւն է անոնց համար՝ որ կը կորսուին, իսկ մեզի համար՝ որ փրկուած ենք՝ Աստուծոյ զօրութիւնն է: **19**Որովհետեւ գրուած է. «Իմաստուններուն իմաստութիւնը պիտի կորսնցնեմ, ու խելացիներուն խելքը պիտի ջնջեմ»: **20**Ո՛ր է իմաստունը, ո՛ր է դպիրը, ո՛ր է այս աշխարհի վիճաբանողը. միթէ Աստուած չիմարացո՞ւց այս աշխարհի իմաստութիւնը: **21**Արդարեւ՝ քանի աշխարհը իր իմաստութեամբ չճանչցաւ Աստուած՝ անոր իմաստութեան մէջ, Աստուած բարեհաճեցաւ քարոզութեան յիմարութեամբ փրկել անո՛նք՝ որ կը հաւատան. **22**որովհետեւ Հրեաները նշան կը պահանջեն, եւ Յոյները իմաստութիւն կը փնտռեն, **23**իսկ մենք կը քարոզենք խաչեալ Քրիստոսը, գայթակղութիւն՝ Հրեաներուն, ու յիմարութիւն՝ Յոյներուն. **24**բայց անոնց որ կանչուած են, թէ՛ Հրեաներուն եւ թէ՛ Յոյներուն, Քրիստոսը՝ Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.27-36

27Քանի որ ինչպէս փայլակը կ'ելլէ արեւելքէն ու կ'երեւնայ մինչեւ արեւմուտք, ա՛յնպէս պիտի ըլլայ մարդու Որդիին գալուստը: **28**Որովհետեւ ո՛ր որ դիակ կայ, հո՛ն պիտի հաւաքուին արծիւները»: **29**«Եւ այդ օրերու տառապանքէն անմի՛ջապէս ետք՝ արեւը պիտի խաւարի ու լուսինը պիտի չտայ իր փայլը. աստղերը պիտի իյնան երկինքէն, երկինքի զօրութիւնները պիտի սարսին, **30**եւ ա՛յն ատեն մարդու Որդիին նշանը պիտի երեւնայ երկինքի մէջ: Այն ատեն երկրի բոլոր տոհմերը պիտի հեծեծեն, ու պիտի տեսնեն մարդու Որդին՝ որ կու գայ երկինքի ամպերուն վրայ, զօրութեամբ ու մեծ փառքով: **31**Եւ ան պիտի դրկէ իր հրեշտակները բարձրաձայն փողով, ու պիտի հաւաքեն իր ընտրեալները չորս հովերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը»: **32**«Ձգեմի՛է՛ն սորվեցէք առակ մը. երբ անոր ոստերը կակուղնան եւ տերեւները ցցուին՝ կը հասկնաք թէ ամառը մօտ է: **33**Նո՛յնպէս դուք՝ երբ տեսնէք այս բոլոր բաները, գիտցէ՛ք թէ մօտ է՝ դռներուն քով: **34**Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. «Այս սերունդը պիտի չանցնի, մինչեւ որ այս բոլոր բաները ըլլան»: **35**Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերս բնա՛ւ պիտի չանցնին»: **36**«Իսկ այդ օրն ու ժամը՝ ո՛չ մէկ մարդ գիտէ, ո՛չ ալ երկինքի հրեշտակները, հապա՛ միա՛յն իմ Հայրս:

1 Corinthians 1.18-24

¹⁸ For the preaching of the cross is to them that perish foolishness; but unto us which are saved it is the power of God. ¹⁹ For it is written, I will destroy the wisdom of the wise, and will bring to nothing the understanding of the prudent. ²⁰ Where is the wise? where is the scribe? where is the disputer of this world? hath not God made foolish the wisdom of this world? ²¹ For after that in the wisdom of God the world by wisdom knew not God, it pleased God by the foolishness of preaching to save them that believe. ²² For the Jews require a sign, and the Greeks seek after wisdom: ²³ But we preach Christ crucified, unto the Jews a stumblingblock, and unto the Greeks foolishness; ²⁴ But unto them which are called, both Jews and Greeks, Christ the power of God, and the wisdom of God

Matthew 24.27-36

²⁷ For as the lightning cometh out of the east, and shined even unto the west; so shall also the coming of the Son of man be. ²⁸ For wheresoever the carcass is, there will the eagles be gathered together. ²⁹ Immediately after the tribulation of those days shall the sun be darkened, and the moon shall not give her light, and the stars shall fall from heaven, and the powers of the heavens shall be shaken: ³⁰ And then shall appear the sign of the Son of man in heaven: and then shall all the tribes of the earth mourn, and they shall see the Son of man coming in the clouds of heaven with power and great glory. ³¹ And he shall send his angels with a great sound of a trumpet, and they shall gather together his elect from the four winds, from one end of heaven to the other. ³² Now learn a parable of the fig tree; When his branch is yet tender, and putteth forth leaves, ye know that summer is nigh: ³³ So likewise ye, when ye shall see all these things, know that it is near, even at the doors. ³⁴ Verily I say unto you, This generation shall not pass, till all these things be fulfilled. ³⁵ Heaven and earth shall pass away, but my words shall not pass away. ³⁶ But of that day and hour knoweth no man, no, not the angels of heaven, but my Father only.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

«Ապաւինեցաք ի խաչ քո Արարիչ յաւիտենից,
որ ետուր մեզ պահապան յաղթող ընդդէմ թշնամոյն.
աղաչեմք սուաւ Փրկիչ պահպանեայ զանձինս մեր»
(Շարականագիր)

Սիրելի հայորդիներ ի Տէր Յիսուս Քրիստոս,
Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին իր օրացոյցին մէջ
Սուրբ Խաչին նուիրուած ունի չորս տօներ՝ Գիւտ Խաչի,
Երեւումն Սուրբ Խաչի, Վարազայ Սուրբ Խաչի եւ
Խաչվերաց:



Խաչի գիւտի (գտնուելու) տօնը կը նշուի Հոկտեմբեր 26-ի մերձակայ Կիրակի
օրը, այս տարի Հոկտեմբերի 28-ին:

Շարականագիրը Գիւտ Խաչին նուիրուած այս շարականին մէջ կը շեշտէ
Սուրբ Խաչին պահպանիչ զօրութիւնը ընդդէմ չարի:

Խաչին գիւտը տեղի ունեցաւ երկու անգամ՝ I-ին եւ IV-րդ դարերուն:

Այս թիւով կը ներկայացնենք Խաչի Երկրորդ Անգամ Գտնուելուն
Դէպքը:

Երբ Խաչը Երկրորդ անգամ գտնուեցաւ


313 թ. Միլանի հրովարտակով Հռոմէական կայսրութեան տարածքին մէջ
քրիստոնեաներուն արտօնութիւն կը տրուի իրենց կրօնը ազատ դաւանելու:
Երուսաղէմը կը դառնայ ուխտավայր, եւ ամէն կողմէ կու գան սրբազան
վայրերը տեսնելու: Կոստանդիանոս կայսրին մայրը՝ Զեդինէն, շատ
բարեպաշտ կին էր, եւ Աստուած անորն մեծ պատիւի արժանացուց: Օր մը
տեսիլքի ձեւով Աստուած յայտնուեցաւ անոր եւ ըսաւ. «Գնա՛, գտի՛ր
Քրիստոսի Խաչափայտը եւ այդ վայրին մէջ տաճար կառուցէ՛»: Զեդինէ
թագուհին 327թ-ին կու գայ Երուսաղէմ եւ մեծ ջանքեր գործադրելով՝ կը
ցանկանայ գտնել Քրիստոսի Խաչը: Խաչափայտին տեղը յայտնի էր միայն
Յուդա անունով Հրեայի մը, որ իր նախնիներուն գրաւոր
աւանդութիւններէն գիտէր խաչերուն թաղման վայրը: Սկիզբը ան
կ'ընդիմանայ եւ վեց օր ցամքած ջրհորի յատակը քաղցած մնալէ ետք, ի
վերջոյ, ցոյց կու տայ խաչերուն թաղման տեղը: Փորելով՝ անոնք կը հանեն
աղբի տակէն, ուր կը գտնուի նաեւ Պիղատոսի հրամանով Յիսուսին


գլխավերելը ամրացուած եռալեզու տախտակը, որ սակայն, պոկուած էր խաչէն: Քրիստոսի խաչը կ'որոշուի կատարուած հրաշքներու շնորհիւ. Խաչափայտին հպումէն կը կենդանանայ մեռած պատանի մը եւ հիւանդութիւններէն կը բժշկուի մահամերձ կին մը: Այդ հրաշքներու ազդեցութեամբ շատերը քրիստոնէութիւն կ'ընդունին, որոնց մէջ նաեւ Յուդան, որ հետագային կը նահատակուի Քրիստոսի անուան համար: Այդ ժամանակ Երուսաղէմի Կիւրեղ եպիսկոպոսը կը բարձրացնէ Ս. Խաչը ի երկրպագութիւն հաւատացեալներու: Դեղինէ թագուհին կողմէ 335թ-ին Գողգոթայի մէջ կը կառուցուի Ս. Յարութիւն տաճարը, ուր կը կանգնեցուի Քրիստոսի Խաչը:

Սուրբ Խաչը ընդունելով որպէս փրկութեան եւ յաղթութեան նշան՝ իւրաքանչիւր Քրիստոնեայ Ս. Գրիգոր Տաթեւացիի խօսքերով կը դիմէ Խաչեալին՝ ըսելով. «Երբ լուսաւոր ամպերու վրայ երեւաս Դօր փառքով, Քու խաչը մեզի ապաւեն թող ըլլայ, Տէ՛ր Յիսուս: Այն ժամանակ մենք՝ Քեզի ապաւինածներս, չենք ամչնար, այլ Քու մեծ զօրութեամբ, որպէս լոյսի որդիներ, կը բերկրինք Քու աջ կողմի: Ամեն»:

Օրհնութեամբ՝

Տեր Դաւիթ քահանայ Սարգսրեան





ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՈԹՔԸ

ԱՂՈԹՔ ՃԱՄԲՈՐԴԵԼԵՆ ԱՌԱՋ

**ՏԷ՛ր, խաղաղութեան ճամբաներուն մէջ պահէ
մեր քայլերը: ՏԷ՛ր, ուղղէ եւ առաջնորդէ՝ մեզ եւ
բոլոր քեզի հաւատացողները, որպէսզի դեպի
խաղաղութիւն եւ յաւիտենական կեանք
երթանք:**

**Կեանքի առաջնորդող եւ խաղաղութիւն
պարգեւող մեր Աստուածը, Քրիստո՛ս, դո՛ւն
առաջնորդէ մեզ, որպէսզի արդարութեան քու
ճամբաներէդ քայլենք եւ քու ողորմութեամբդ
հասնինք կեանքի եւ փրկութեան
Նաւահանգիստը. որովհետեւ դուն ես մեր
օգնականը եւ փրկիչը: Քեզի՛ կը վայելեն փառքը,
իշխանութիւնն ու պատիւը, այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:**



PRIÈRE AVANT DE PARTIR EN VOYAGE

Ô Seigneur, dirige et conduis nos âmes et les âmes de tous les fidèles, et fais-les marcher dans la justice vers la vie éternelle.

Ô Christ, notre Dieu, cr.ateur de la vie et donneur de paix, conduis-nous afin que nous puissions marcher dans ta justice et parvenir au port de la vie et du salut en paix, par la grâce de ta miséricorde. Parce que tu es notre soutien et notre Sauveur, et à toi reviennent la gloire, la puissance et l'honneur, maintenant et toujours, et dans l'éternité de l'éternité. Amen.





Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան
Feast de l'église pour la Semaine Prochaine

Հոկտեմբեր – Octobre

29, Երկուշաբթի - Տօն Սրբոցն Անաստասայ քահանային, Վարոսի,
Թեոդիսեայ եւ որդւոց նորա եւ որք ընդ նմա կատարեցան:

***Lundi 29 – Fête des Saints prêtres Anasdase, Varos,
Théotide et de leurs enfants qui oeuvrèrent avec eux***

30, Երեքշաբթի - Տօն Սրբոց Հիպերիքեանցն
որք ի Սամոսատ կատարեցան
Տօն Սրբոցն Սեւերիանոսի Սեբաստացւոյն,
Բաբելայ ծերոյն եւ 84 աշակերտաց նորին:

**Mardi 30 - Fête des Saints Hiberniques
qui oeuvrèrent à Samosate**

31, Չորեքշաբթի – Պահք:

Mercredi 31 - Jeûne.

Նոյեմբեր /Novembre

1, Հինգշաբթի - Տօն Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին:

Jeudi 1 - Fête du Saint Patriarche Jean Chrysostome

2, Ուրբաթ - Պահք:

Vendredi 2 - Jeûne.

3, Շաբաթ – Տօն Ամենայն Սրբոց Հնոց եւ Նորոց, յայտնից եւ անյայտից:

**Samedi 3 – Fête de Tous les Saints, anciens ou nouveaux,
Connus et inconnus.**

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018

**Տասներկու Ավարդապետներու
Յիշատակութեան Օր**

**Ռեթեսի, Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի,
Աթանասի, Կիլրեղ Երուսաղէմացիի,
Եփրեմ Խուրի Ասորիի, Բարսեղ
Կեսարացիի, Գրիգոր Նիւսացիի, Գրիգոր
Աստուածաբանի, Եպիփան Կիպրացիի,
Յովհան Ոսկեբերանի եւ Կիլրեղ
Ալեքսանդրացիի**



Այս հայրերը կամ վարդապետները եղած են առաքինի կեանքով ու նկարագրով հռչակուած անձնաւորութիւններ, որոնք եկեղեցւոյ կողմէ դասուած են սուրբերու կարգին եւ ճանչցուած որպէս Ընդհանրական Եկեղեցւոյ մեծ հայրեր, Սուրբ Գիրքի հեղինակաւոր մեկնիչներ, Քրիստոնէական հաւատքի ուղղափառ աւանդապահներ: Տասներկու վարդապետներու գործունէութեան կարեւորագոյն առանցքը ուղղափառ հաւատքի պահպանութիւնն ու անաղարտ փոխանցումն էր սերունդներուն: Քրիստոնէութեան հիմնադրման օրէն իսկ գոյութիւն ունեցած են հերետիկոսութիւններ, հերձուածներ, որոնց հետեւորդները, սխալ ընկալելով ու մեկնաբանելով Աստուծոյ խօսքը, յառաջացուցած ու զարգացուցած են թիւր պատկերացումներ եւ մոլար ուսմունքներ՝ կապուած Քրիստոնէական վարդապետութեան հիմնարար սկզբունքներու հետ: Բայց ի հակադրութիւն անոնց՝ եկեղեցւոյ տասներկու վարդապետները, ամբողջութեան մէջ ըմբռնելով աստուածային յայտնութիւնը, տուած են վարդապետական առանցքային դրոյթներու եւ սկզբունքներու ճշգրիտ մեկնութիւնը՝ ուղղափառութեան սահմաններուն մէջ զարգացնելով եկեղեցական աստուածաբանութիւնը: Տասներկու վարդապետներու դերն ու նշանակութիւնը այսօր առաւել քան երբեւէ անհրաժեշտ են մեր հասարակութեան համար, ուր որ ներթափանցած են Սուրբ Գիրքի

կամայական մեկնիչներ, որոնք Աստուծոյ խօսքի՝ իրենց ոչ ճիշտ ընկալումներն ու պատկերացումները պատուաստած են մեր ժողովուրդի զաւակներուն մտայնութեան մէջ՝ հեռացնելով անոնց ո՛չ միայն իրական, ճշմարիտ փրկութեան ճանապարհէն, այլեւ մեր ազգային գիտակցութենէն, Աստուածաշունչ մատեանի ուղղափառ մեկնութեամբ ձեւաւորուած մտածողութենէն, անոնց հետ մեկտեղ՝ նաեւ՝ ազգային դիմագիծէն ու նկարագիրէն:

Ուստի, այս տօնը մեզի համար եւս մէկ պատեհ առիթ է արժեւորելու մեր նախնիներուն թողած հարուստ ժառանգութիւնը՝ հաւատարիմ մնալով մեր Եկեղեցւոյ եւ Քրիստոսի Եկեղեցւոյ Ս. Հայրերուն լոյս հաւատքին: Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Տասներկու Ս. Վարդապետներուն խնկելի յիշատակը կը ոգեկոչէ Խաչվերացի 2 Կիրակիին յաջորդող շաբաթ օրը:




Holidays

Saturday, October 27, 2018

Commemoration of the Twelve Archimandrites – Sts. Retheos, Dionisios, Selbestros, Athanas, Cyril of Jerusalem, Ephrem Khourie Assyrian, Vasil (Barsegh) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory the Theoloegian, Epiphan of Cyprus, John Chrysostom and Cyril

Commemortaion of the Twelve Archimandrites – Sts. Retheos, Dionisios, Selbestros, Athanas, Cyril of Jerusalem, Ephrem Khourie Assyrian, Vasil (Barsegh) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory the Theoloegian, Epiphan of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria



Those Archimandrites (Holy Doctors) or Church Fathers (Hierotheus of Athens, Dionysius of Areopagite, Silverst of Rome, Athanasius of Alexandria, Cyril of Jerusalem, Ephraem the Syrian, Barsegh (Vasil) of Caesaria, Gregory of Nyssa, Gregory of Nyssa, Gregory the Theologian, Epiphanius of Cyprus, John Chrysostom and Cyril of Alexandria) have been famous for leading a pious and devote life and are considered to be the Fathers of the Universal Church, respectable interpreters of the Holy Bible and orthodox maintainers of the Christian Faith.



The main goal of the twelve Church Fathers' activity was maintenance and passing to the coming generations the orthodox faith. Heresies and sects and their followers have existed since the existence of Christianity. They have falsely comprehended and interpreted the Word of God, have set forth and developed false and misleading teachings related to the fundamental principles of Christianity. In contrast to them, the twelve Church Fathers, comprehending the divine revelation in the whole, have provided the true interpretation of the doctrinal key points and principles and have developed ecclesiastical theology.

The role of the twelve Church Fathers is at present especially important for our society, where various false interpreters of the Holy Bible have intruded.

Sunday, October 28, 2018

Feast of the Discovery of the Holy Cross

The Feast of the Discovery of the Holy Cross is one of the four feasts dedicated to Christ's Holy Christ.




In 327 AD Heghineh, the Mother of the Byzantine King Kostandianos, visits Jerusalem with the aim to search the holy Cross of the lord. A Jew, named Judas, helps the King's mother to search the site where Christ was crucified – Golgotha. In the result of searches the wooden crosses of Christ and the two criminals crucified together with him are found. For recognizing the Lord's Cross, the remains of a young man are put on the crosses in turn. On one of the crosses the young man rises to life and thus the Lord's Cross is identified. After that miracle the Jew converts to Christianity and later becomes the Bishop Cyril of Jerusalem. After the discovery of the Holy Cross Heghineh renovates the Holy Places of Jerusalem and builds the Church of Holy Resurrection of Golgotha, where later the Lord's cross is installed.

The Armenian Apostolic Church celebrates the Feast of the Discovery of the Holy Cross on the Sunday during the period October 23-29.



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 28 Հոկտեմբեր 2018



ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ ՊԻՏԻ ՄԱՏՈՒՑՈՒԻ
ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԱՆԴԱՐՁ ԱՆԴԱՍՈՒՅԻՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԵՒՆԻԿԷ ԳԱՐԻՊԵԱՆ
ՍՕՖԻ ՊԷԼԿԻՆ
ԻՍԿՈՒՀԻ ՀԱԶԱՐԵԱՆ
ՀԱՅԿՈՒՀԻ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ
ԱՆՆԻԿ ԱԴԱՄՕՂԼՈՒ
ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԷԼԻՋ ԹԱՇՃԵԱՆ ԱՐԱՊԵԱՆ
ՇՈՒՇԱՆ ԲՐՈՒՏԵԱՆ
ԱՐՇԱԿՈՅՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ԼԻՒՍԻ ՓԵԼԹԷՔԵԱՆ
ՄԵՐՍԵՏԷՍ ՍԱՐԱՖԵԱՆ
ԼԻՒՍԻ ԳԱՄՊՈՒՐԵԱՆ
ՋԱՐՈՒՀԻ ՀԱՐՄԱՆՏԱՐԵԱՆ
ՌԵՊԵՔԱ ԹԱՇՃԵԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ՀԱՃԻԳԸՋԵԱՆ
ԱՐԱՔՍԻ ԿՐԷՅՍ ՇԻՐՈՅԵԱՆ
ՍԻՋԱՆ ԷՍՍԷՆ
ՌՕՋ ԹԱԹԻԿԵԱՆ
ԱՆՆԱ ՊԵՏԻՐԵԱՆ-ՊԵՏԵՒԵԱՆ

ՄԱՆՆԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ
ՄԱՅՏԱ ՑՆԾԱԼԵԱՆ
ԱՆԳԻՆԷ ՇԱՔԱՐԵԱՆ
ԱՆԱՀԻՏ ԹԱԹԷՈՍԵԱՆ
ԱՐՓԻՆԷ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ՀՌԻՓՄԻՄԷ ՔԷՇԻՇԵԱՆ
ԼԻԻՄԻ ՔԷՍԹԷՔԵԱՆ
ՎԵՐԳԻՆԷ ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՍԻՐԱՆՈՅՇ ՔԷՕՐՀԱՃԵԱՆ
ՄԱՔՐՈՒՀԻ ՄԸԿԸՐԵԱՆ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ
ԱԼԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՍԵԴԱ ԿՈՒՏՍՈՒՋԵԱՆ
ԲԵՐԿՐՈՒՀԻ ՉԷՕՄԼԷՔԺԻՕՂԼՈՒ
ԱԼԻՍ ԳԱՐԱԳԱՇ
ՀԱՅԿԱՆՈՅՇ ԿԷՐԻՔԵԱՆ
ՄԵԼԻՆԷ ՇԻՐԻՆԵԱՆ
ՄԱԹԻԼՏ ԳԱՐԻՊԵԱՆ
ԱՐԱՔՄԻ ԿԱԶԵՐԵԱՆ
ՆԱՏԻԱ ԲՕԼԱԹ
ԳՈՀԱՐԻԿ ԹԵՐՋԵԱՆ
ԱՆԱՀԻՏ ՄԻՆԱՍՕՂԼՈՒ
ՀԱՅԿՈՒՀԻ ԳԱԶԱԶԵԱՆ
ՄԱՔՐՈՒՅԻ ԿՈՉԵԱՆ
ԹԵՓՕՐԱ ԹԱԹՈՒԼԵԱՆ
ԺՈՒՍԹԻՆ ԱՐԹԻՆԵԱՆ
ԱՐԱՔՄԻ ԳՕՃՈՅԵԱՆ
ՄԱՐԻ ԳԱԻՈՒՔՃԵԱՆ
ՍԻՐԱՆ ՍԻՄԻԹԵԱՆ
ՎՐԷԺ ԴԱՌՊԱՍԵԱՆ
ՔԸՄՔԸՄԵԱՆ
ԱՐՇԱԼՈՅՍ ՃԱՆՔՈՒԼ
ԹԱԳՈՒՅԻ ՇԻՐԻՆԵԱՆ
ՍՕՆԱ ՏԵՄԻՐՃԵԱՆ
ԻՄԱՍՏՈՒՅԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
ԱՆԱՅԻՏ ԷՎՐԵՆՍԷԼ



Տիար Արի Գարաարթինեանի,
Տիկ. Զեթի Զիրիաքիտիսի,
Տիկ. Աֆրօտիթի Յալէբլիօղլուկի,
Տիար Նիքո Զիրիաքիտիսի,
Տիկ. Էօժէնիա Նանասի,
Օրդ. Աթինա Մանթիօղլուկի,
Օրդ. Զեթի Մանթիօղլուկի,
Օրդ. Էֆթիմիա Գարաարթինեանի,
Տիար Զօսթա Զիրիաքիտիսի,
Տիար Լուքաս-Արման Գարաարթինեանի,
Տիար Բարասքէլաս-Այուլաննիս Գարաարթինեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

ԱԹԻՆԱ

ՕԶԱՆ ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ

(ATHINA OZAN KARAARTINYA N)

մահուան 2-րդ տարելիցին առիթով

ՇԱՀՆՈՒՐ ԱՐՄԱՆ

ԳԱՐԱԱՐԹԻՆԵԱՆԻ

(SHAHNUR ARMAN KARAARTINYAN)

մահուան 15-րդ տարելիցին առիթով





Տիկ. Ռիդա ԱԼԵՏԻՍԵԱՆԻ ԵՆ ՂՈԼՏՐԻՆ՝ ԶՈԼՈՒԻ,,
Տ. ԵՆ ՏԻԿ. ՍԻԼՎԱ ԵՆ ՄԻԶԷԼ ԼԱՖԷՅԻ,
Տ. ԵՆ ՏԻԿ. ԼԵՆԱ ԵՆ ՃՕՆ ՍԹԻՄԱՐՆԻ,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ՇԱՔԷ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ
ԱԶԻՐԵԱՆՆԵՐՈՒ**

(CHAKE & HAROUTIOUN AZIRIAN)

Յոգիներուն ի հանգիստ
Ինչպէս նաեւ՝

**ԱԶԻՐԵԱՆ, ԱՒԵՏԻՍԵԱՆ, ԵԱԼԸՆԸԶԵԱՆ
ԵՒ ԱՒԵՏԻՔԵԱՆ**


**(AZIRIAN, AVEDISSIAN, YALENEZIAN,
& AVEDIKIAN FAMILIES)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ



ՆՈՒԻՐԱՏՈՒՄԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

*Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Donations of October 2018
have been received with great appreciation*



CHURCH:

Dr. Arto Demirjian \$100, Mrs. Kaline Ortaaslan-Yorgantz \$50.

BAZAAR:

Miss Shoushan Aroyan \$20.

“GOMIDAS” CHOIR 60th ANNIVERSARY:

*Mrs. Irma Basmajian, Mr. & Mrs. Nuran Cankul, Dr. Edouard Yeghiayan \$250,
Mr. & Mrs. Antranik & Armine Dulbinci \$200, Mr. Vrej Nigogossian \$1000,
Mr. & Mrs. Hazar & Hasmig Met, Mr. Majak Tosikyan,
Mrs. Hilda Kepekci, Dr. & Mrs. Archavir & Nadya Gundjian,
Mrs. Ani Tasan-Cioffi, Mr. Harutyunr Tasan,
Mr. & Mrs. Avedis & Arshaluys Djhanian \$100.*

RENOVATION FUND:

Mr. & Mrs. Krikor & Armine Kanar \$1000.

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE TELMA ECITYAN ANTEPYAN:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan, Mr. Vrej Nigogossian \$250, Varujan & Seta Artokun, Dr. & Mrs. Nurhan & Ani Ecityan, Mr. & Mrs. Serge & Tanya Ecityan \$100,

Mrs. Alice Cicek, Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy, Mr. & Mrs. Hazar & Hasmig Met, Mr. & Mrs. Kevork Kalusyan, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Mr. & Mrs. Krikor Aslanian, Mrs. Chake Mamaganian \$50, Mr. & Mrs. Hagop Gerikyan, Mr. & Mrs. Kevork & Hasmik Manguelian \$40, Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen, Mr. Asot Kasparyan, Mr. & Mrs. Ara Gerikyan, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian, Mr. & Mrs. Suren & Natya Sirinian, Mr. & Mrs. Berdj & Emma Essen \$30, Mrs. Pergruhi Meremetci, Mr. & Mrs. Garbis & Sylva Ferah \$25, Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan, Mr. & Mrs. Mego & Chake Malkhassian \$20.

**HOKEHANKISD:
THE LATE YERVANT BICHAKEDJIAN:
*Mr. & Mrs. Asbed & Mirna Bajakian \$50.***





Website:
www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,

Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի, թէ յետայսու կարելի է այցելել
Եկեղեցւոյ **Կայքէջը - Website www.saintgregory.ca,**

ուր պիտի գտնէք Եկեղեցւոյ վերաբերող լուրերը, ձեռնարկներու
վերաբերեալ տեղեկութիւնները, կատարել Ձեր սրտաբուխ
Նուիրատուութիւնները եւ օգտուիլ ընձեռուած այլ
կարելիութիւններէն համացանցային դրութեամբ:

Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Dear Parishioners,

We are glad to inform you our Church's newly developed

Website: www.saintgregory.ca,

*where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations and
benefiting from other possibilities of our Website.*

Thank you for support!

Parish Council

Ծիսական Խորհուրդ

Մեր Հաւատացեալներու Ուշադրութեան

Մոնթրէալի Autoroute 40-ի Ամբողջական Փակումը Նոյեմբեր 3-5-ը

Մոնթրէալի մեծագոյն երթելեկութեան գօտիներէն՝ 40-րդ Մայրուղին (Autoroute) դէպի արեւելք-արեւմուտք տարածուող, Նոյեմբերի առաջին շաբթուայ ընթացքին գրեթէ 36 ժամ ամբողջովին պիտի փակուի երկու ուղղութիւններով, շինարարական աշխատանքներու պատճառով կառուցելու համար ապագայի Metropolitan Express ցանցը (REM):



Նոյեմբեր 3- 5-ը ժամանակամիջոցին A40- ի ամբողջական փակումը կը տարածուի մօտաւորապէս ութ քմ., Saint-Laurent-ի եւ Pierrefonds-Roxboro-ի եւ արեւմտեան Dollard-des-Ormeaux-ի եւ Pointe-Claire-ի թաղամասերէն մինչեւ Մոնթրէալի Արեւմտեան կողին ուղղուող ճանապարհը:

Ճանապարհային երթելեկը կը փակուի Շաբաթ, Նոյեմբեր 3, երեկոյեան ժամը 6-ին, երթելեկութեան բոլոր ուղղութիւններով սկսեալ boul. Saint- Jean- Էն, Pointe-Claire- Էն՝ մինչեւ Autoroute 13-ի խաչմերուկը, ներառեալ Saint-Laurent-ի շրջանը: Այս ինքնաշարժներու երթելեկութեան արգելափակումը պէտք է վերցուի մինչեւ Նոյեմբեր 5-ի առաւօտեան ժամը 5:

Fermeture complète de l'A40 du 3 au 5 novembre




Une des plus importantes voies de circulation est-ouest de la région de Montréal, l'autoroute 40, sera complètement fermée dans les deux directions pendant près de 36 heures lors de la première fin de semaine de novembre, à cause des travaux de construction du futur Réseau express métropolitain (REM).

Du 3 au 5 novembre, la fermeture complète de l'A40 s'étendra sur presque huit

kilomètres à travers les arrondissements de Saint-Laurent et Pierrefonds-Roxboro et les municipalités de Dollard-des-Ormeaux et Pointe-Claire, dans l'ouest de l'île de Montréal.

L'autoroute 40 sera fermée à toute circulation à 18 h, le samedi 3 novembre, à partir du boulevard Saint-Jean à Pointe-Claire jusqu'à l'intersection de l'autoroute 13, dans l'arrondissement de Saint-Laurent. Cette entrave à la circulation automobile et au transport des marchandises devrait être levée juste avant l'heure de pointe du lundi 5 novembre, à 5 h.

Շնորհակալութիւն
Ծիական Խորհուրդ
Merci
Conseil Paroissial



For God so loved the
world, that he gave his
only Son, that whoever
believes in him should
not perish but have
eternal life.

John 3:16



Յառաջիկայ Ձեռնարկներ

**Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 27 եւ
28, 2018**

**«Կոմիտաս» Դպրաց Դասի Հիմնադրութեան 60-Ամեակի
Տօնակատարութիւն –**

**Շաբաթ, 10 Նոյեմբեր 2018 երեկոյեան ժամը 8-ին «Մարի
Մանուկեան» սրահին մէջ:**

Մանուկներու Ս. Ծնունդ / CFFA – Կիրակի, 2 Դեկտեմբեր 2018

**Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ –
Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018**

UPCOMING EVENTS

**Annual Bazaar – Saturday & Sunday -
October 27 & 28, 2018**

**“Gomidas” Choir the 60th Anniversary Celebration –
Saturday, November 10, 2018 at 8:00 pm
in the Church “Marie Manoogian” hall.**

**Children’s Christmas /CFFA –
Sunday, December 2nd, 2018**

**Church 48th Anniversary –
Sunday, December 9th, 2018**



Ուշադրութիւն
Մեր Սիրելի
Հաւատացեալներուն



Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ: Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիսական Խորհուրդ

Attention to our beloved parishioners,

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.

Parish Council



Աստուածաշունչի Սերտողութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ

Միացեք մեզի ամէն Զինգշաբթի
երեկոյեան
ժամը 7:00-ին, մասնակից ըլլալու մեր
հետաքրքրական Աստուածաշունչի
Նիւթերուն
Տ. Դաւիթ Մարգարեանի հետ:

Մեր անցեալ Զինգշաբթի օրուան
քննարկումի նիւթն էր՝

«Դիակիզումը»

- Ճոխ գիտելիքներ
- Հաճելի Ընկերային Մթնոլորտ





**Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդարանիստ Մայր Եկեղեցւոյ
2018 Տարեշրջանի Տօնացոյց**

Ամիս	Օր	Չեռնարկ
Յուլիտեմբեր	27, 28 Շաբաթ, Կիրակի	Տարեկան Պագար «Մարի Մանուկեան» սրահ
Նոյեմբեր	10, Շաբաթ	«Կոմիտաս» Դպրաց Դասի 60- րդ Տարեդարձ
Դեկտեմբեր	2, Կիրակի	Մանուկներու Ա. Ծնունդ եւ Կաղանդի Տօնակատարութիւն «Մարի Մանուկեան» սրահ
	9, Կիրակի	Մայր Եկեղեցւոյ Օծման 48-րդ Տարեդարձ Տօնական Ճաշկերոյթ «Մարի Մանուկեան» սրահ
	31, Երկուշաբթի	ՆՈՐ ՏԱՐԻ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի
Cathédrale Arménienne St-Grégoire l'Illuminateur
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

Կազմակերպությունը՝

ՏԻԿՆԱՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն

ՊԱՉԱՐ

Պատույ Հիւր՝

Ազնուափայլ Տիկին Արմինե Շիրինեան

Շաբաթ 27 եւ Կիրակի 28 Հոկտեմբեր 2018
Ժամը 10:00-էն

Ձեռային աշխատանքներ

Անուշեղէններու եւ խմորեղէններու վաճառք
Երկու օրերուն՝ ճաշի սպասարկութիւն

Յատելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել
Եկեղեցոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին



GOMIDAS" CHOIR THE 60TH ANNIVERSARY CELEBRATION

UNDER THE AUSPICES
HIS GRACE BISHOP ABGAR HOVAKIMYAN



Marten
Yorgantz



With Participation: Famous Singer
MARTEN YORGANTZ
& DJ SAKO

- FUN /SINGING /DANCING
- MUSIC

SATURDAY, NOVEMBER 10, 2018

AT 8:00 PM

IN THE CHURCH "MARIE MANOOGIAN" HALL

SUPPER & APPETIZERS
BY "LADIES COMMITTEE"

FOR RESERVATION PLEASE CALL:

- **MARAL BOGHOSSIAN (514) 279-3066**
 - **ARA GERIKYAN (450) 682-5565**
- OR (514) 947-4524 AFTER 5 PM**

DONATION \$50

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը կը վերսկսին
Կիրակի, 14 Յոկտեմբեր 2018-ին, կեսօրէ ետք, ժամը
1-ին:

Les pratiques de la chorale des Jeunes
recommencerons

Le dimanche, 14 octobre 2018 à 13:00 heures

Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու
հիմնական երաժշտութեան նութաները, միաժամանակ պիտի
մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les
enfants auront l'opportunité d'apprendre les
bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի
բաղկանայ ժամանակակից, դասական եւ
կրօնական երաժշտական կտորներէ,
Ֆրանսերէն եւ Յայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales
contemporaines, classiques et religieuses, de langue française et
arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

SUNDAY SCHOOL

For the ages of 6-14 years old children

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութիւններ եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



*In a pleasant and friendly atmosphere, the
children will learn:*

- *Psalms & songs*
- *Armenian language skills*
- *Interesting stories & entertainments*
- *Fun & fascinating consecutive Fieldtrips*

*Sunday School Every Sunday
at 11:00 am*

*For more information and registration call to the
Church office
(514) 279-3066*

Fr. David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral**



**ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ**



**Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ**

***BIBLE STUDY & INTERESTING
DISCUSSIONS***

BY FR. DAVID MARGARYAN

**Տեղի պիտի ունենայ ամեն Հինգշաբթի
երեկոյեան՝ ժամը 7-ԷՆ սկսեալ Եկեղեցւոյ մէջ:**

**Every Thursday Starting at 7:00 pm
in the Church.**

**Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու**

**Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի՝
Ներկայացուցած Աստուածաշնչական
Նիւթերուն:**

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

**We invite all our beloved faithful to be present
to the bible sessions with spectacular biblical
subjects that will be presented
by Fr. David Margaryan.**

**Coffee and tea will be served
during the sessions.**

**Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
Ներկայութիւնը:**

**Cordially we expect everyone's
presence.**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-
8008/ stgregorychurch@gmail.com**

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Յայտարարութիւն

Սիրելի հաւատացեալներ,

Կը տեղեկացնենք ձեզի թէ յետայսու

Ճիսական Խորհուրդի ժողովներուն իւրաքանչիւր ամսուայ առաջին Երեքշաբթի օրը,

Երեկոյեան ժամը 5-5:30, կ'ես ժամ տեւողութեամբ, առիթը պիտի ընծայուի մեր հաւատացեալներուն խորհրդակցական հանդիպում մը ունենալու

Ճիսական Խորհուրդին հետ:

Այն հաւատացեալները, որոնք ունին Եկեղեցւոյ նկատմամբ հարցեր, մեկնաբանութիւններ կամ ենթադրութիւններ կրնան ներկայացնել այդ հանդիպման ընթացքին:

Ժամադրութեան համար հեռաձայնել

Եկեղեցւոյ քարտուղարութեան՝

(514) 279-3066

**Շնորհակալութեամբ՝
Ճիսական Խորհուրդ
Ս. Գր. Լուս. Առաջ. Մայր Եկեղեցւոյ**